

«Անմիտ որդեսիրութիւն», «Խելօք Գաւիթ», «Առաջին օր Ապրիլի», որոնց հեղինակներն են գլխաւորապէս դարձեալ Հ. Պետրոս Մինասեան, Հ. Միքայէլ Չէմպէրէքեան, Հ. Արսէն Բագրատունի, որոնք ապրած ժողովուրդին մէջ՝ կարող էին տալ իրականութիւնը պատկերացնող հոգեբանական էջեր:

ՄԻԽԹԱՐԵԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԱՐԺԵՔԸ.

Միխթարեան թատրոնը իր դարու մը և աւելի կեանքով, թատերական շարժումը խորապէս զօրացուց, և նոյնիսկ ազգին մէջ տարածուելէն վերջն ալ՝ տակաւին մնաց կանգուն. 1864-ին տպուած յայտագիրները ապացոյց են ասոր: Միխթարեան թատրոնը չեղաւ այն կարճատեւ գրական շարժումներէն՝ որ հետք չեն թողուր. այդ ձեռնարկը հասաւ իր նպատակին, արթնցուց սէրը և գիտակցութիւնը այս գրական սեռին՝ ազգին մէջ: Թատերական հսկայ արտադրութիւն մը թողած են Միխթարեանները. մի միայն պահուած ձեռագիրները հարիւրէ աւելի են, որոնցմէ շուրջ երեսուն կտոր տպագրութեան բախտին ալ արժանացած են: Այս մեծ քանակը թատերական գործերու, եթէ որակով կը մնայ վիճելի, սակայն ամբողջութեան մէջ կը փաստէ Միխթարեաններու գոտակա ու ժողովրդական գերգնահատելի վաստակը: Նպատակը՝ զոր հետապնդած են այդ վաստակաւորները՝ գրականէ աւելի եղած է հայրենասիրական: Յայտնի է թէ բեմադրուած կեանքը հինն էր, դասականը, զիւցազներու փառահեղ շրջանը, ուսումնասիրուած գրքերու վրայէն, հետեւարար հեռու իրականութիւնէ. բայց ոգեկոչումն ըլլալով հին զիւցազնական ու առաքինական կեանքի մը՝ ասով իսկ գրաւելի կը դառնային, ազդելու չափ հոգիներու վրայ, և նոյնիսկ յազդելու ներկաները: Միխթարեան թատերագիրները ոչ միայն սիրցուցած են հայուն իր անցեալին յիշատակները, լուսապայծառ դէմքերը և

կրօնքի ու հայրենիքի պաշտպան հերոսները, ոչ միայն խանդավառած են հայերը զազափարական Հայաստանի մը տեսլակաւ, այլ ձկտած են նաեւ համամարդկային զգացումներու՝ անձնազոհութեան, վեհանձնութեան ու հաւատարմութեան տիպարներ հանելու բեմին վրայ՝ ընդհանուր պատմութեան տոնուած դէմքերու պատկերացումով: Այս ձեռնարկն արդէն յինքեան մեծ է, և մեծ ազդի մը արժանաւոր, որուն մտքի և սրտի արտադրութիւնները կը տարածուին մինչեւ հեռաւոր Չինաստանի մը գիւցազնական արարքներն ու դէմքերը, ինչպէս «Հոհամդի» և «Լէտնդոս» ողբերգութիւններու մէջ, ներշնչուած չինական պատմութիւնէն:

Եթէ ողբերգութիւնները՝ իրենց ձեւով ու նիւթով դասական կնիք կրելուն՝ մնացին զուրկ իրական կեանքի մերձեցումէն, ընդհակառակն կատակերգութիւնները, իրականի շունչն ունէին անտարակոյս, աւելի մօտ ապրուած կեանքին: Այդ կատակերգութիւններէն շատերը, յօրինուած Մուրիէրի գործերուն նմանութեամբ, զուրկ չեն իսկապէս երգիծական նուրբ շեշտէ և հոգեբանական անդրադարձումներէ: Ատոնցմով մեր ժողովրդական բարքերուն խոշորութիւնը, գծութիւնները, գլխաւորապէս պոլսական կեանքէն առնուած տիրացուններու, վարժապետներու, գրագէտներու, մաքսանենգներու, վաճառականներու ծիծաղելի թերութիւնները կը հանուէին բեմի վրայ, ու Պարոնեանէն դար մը առաջ՝ Մեծասպտիւռ մոշրացիակներու, Պաղտատար սոյրարներու տիպարները կը ցուցադրուէին երգիծաբանօրէն սրամիտ ու զուարթ շեշտով մը: Այդ կատակերգութիւնները, որոնց խորքը ժողովուրդն էր միշտ, արեւմտահայ աշխարհաբարով գրուած, բերին իրենց նպատակը հայ կատակերգութեան, ամէն բանէ առաջ պատրաստելով երգիծաբանական լեզուն: Այդ կատարներով զուարթ բեմի ժողովրդականութիւնն է որ իր ընթացքը կը կատարէր և իր հոգեբանական ճամբան

կը բանար դէպի կատակերգական կատարեալ ներկայացումները:

Թատրոնը Ս. Ղազարէն ու Միխթարեան վարժարաններէն անցաւ ազգին մէջ: Շարժման գլխաւոր կեդրոններն եղան Պոլիս և Թիֆլիս, հոն ուր զարգացած ու գիտակից տարրը կ'ապրէր արեւմտահայ և արեւելահայ հասարակութիւններու: Այդ երկու

կեդրոններու մէջ ալ ստեղծուեցան երկու անջատ բեմեր:

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

Հանուած՝ հեղինակին «Պատմութիւն Արդի Հայ Գրականութեան» գործէն, որ տպագրուրեալն մէջ է:

ԱՐԾՐՈՒՆԵԱՅ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԷՋ

Մեր պատմագիրները սովորաբար այնպէս կը ներկայացնեն՝ թէ Սենեքերիմ Արծրունին Սերաստիա փոխադրութենէն (1018) վերջ՝ Վասպուրական ենթակում է ուղղակի Բիւզանդական տիրապետութեան, որ հազիւ կրցած է տոկալ մինչեւ 1080, և տեղի տուած է Սելճուքեանց առջեւ: Չէ յիշուած թէ ինչպէս Սիւնեաց՝ նոյնպէս նաեւ Վասպուրականի մէջ գոյութիւն ունեցած են մանր իշխանութիւններ, որոնց պետերը Արծրունի թագաւորութիւնը վերահաստատել և անկախ պետութիւն մը կազմել փորձած ըլլալ կը թուին:

Դժբախտաբար մինչեւ հիմա յայտնուած վաւերագիրներ թոյլ չեն տար վճռական ըլլալու, բայց ինչ որ ծանօթ է մեզի, ցոյց կու տան թէ Վասպուրականցիք իրենց անկախութիւնը երկար ատեն պահած են, եթէ ոչ ամբողջ նահանգին՝ գէթ անոր մէկ քանի մասերուն մէջ:

Ուրեմն մեր պատմութեան այս պակասաւոր էջը վերակազմելու փորձ մը կ'արժէ կատարել առձեռն տեղեկութիւններով, յառաջիկային ձգելով աւելի լրացուցիչ տեղեկութիւններով ճոխացնել այս ուրուագիծը, որուն զլխաւոր ատագծը կը

կազմեն թովմա Արծրունի շարունակողին մի քանի էջերը, Դանիէլ Աղթամարցիի Յիշատակարանը և քանի մը ձեռագիրներու Յիշատակարաններ և քանի մը տողեր մեր պատմիչներէն:

Երբ Բիւզանդական Պետութիւնը վերագրուեց Հայաստանը՝ ինքն արդէն աւատական կազմ ստացած էր և հետեւաբար իրեն համար անսովոր բան մը չէր հանդուրժել գոյութեան ճորտական իշխանութիւններու, որոնք արդէն կային երկրին մէջ, հայ և իսլամ պետերով:

Բիւզանդիոն, Հայաստանի այն մասերը զոր ժԱ. դարուն սկիզբները գրաւած էր, բաժնեց երկու գլխաւոր զինուորական կառավարութիւններու, կամ կողմնակալութիւններու, որոնց զուլսը դրաւ մէկ մէկ զօրավար:

Ատոնցմէ մին էր «Տանն Հայոց իշխանութիւնը», կամ Անիի կուսակալութիւնը և միւսն էր «Վասպուրականի իշխանութիւնը» կամ Արեւելից կուսակալութիւնը:

Վասպուրականի մէջ 1018-էն մինչեւ 1080 պաշտօնավարեցին իբր «կուսակալ արեւելից» յաջորդաբար

Վասիլ պատրիկ Այգեյրոս¹
 Նիկեիոսը կոմորոս կամ կոմիանոս
 Նիկեոսում ներքինին
 Սիմոն ներքինին
 1038-ին Նիկեոս կառաւելաս կամ
 Խրիստիոս
 Մեծ իշխան Հայոց Գանձի² († 1035)
 Տաճատ³

(1) Յոյն պատմիչ Կենդրիոս (Բ. էջ 464) ասոր հա-
 մար կ'ըսէ. «ամէն բանի մէջ անյաջող հանդիսանալով՝
 պաշտօնէ հանուեցաւ և իրեն տեղ զրկուեցաւ զօրավար
 Նիկեիոսը կոմիանոս պատրիկը որ այդ զաւառը համա-
 զելով, մասամբ բռնութիւն զործածելով կայսեր հպա-
 տակեցուց»:

(2) Ըստ Լաստիվերցի (էջ 28) 1036-1037ին «այլ
 ոմն փոխանորդեաց զիշխանութիւն» Կաւասթրասի Ուո-
 հայեցի (էջ 86) և Սմբատի (էջ 53) զբաններէն հե-
 տեցնելով համարօքն «մեծ իշխանն Հայոց Գանձի»,
 Տարօնի շրջանակին մէջ իշխող տունէ մը — ինչպէս կը
 կարծէ Հ. Ն. Ալինեան — պիտի բլլայ այդ փոխանորդը
 որ թերեւ յաջորդած Կաւասթրասի Կ'երեւի թէ տաղ-
 նապի մը ասան Հայոց մը փոխառեալ է «Արեւելից
 կուսակալութիւնը»: Գանձի մեռաւ 1038ին Բերկրի
 կոնիւն մէջ:

(3) Տաճատ յաջորդը Գանձի, քիչ ետքը փոխադրուած
 է Տարօն և զայն կառավարած է իրր բնականական
 պաշտօնատար (Ուո. էջ 386), իսկ իր որդին Ապլասաթ,
 նոյն հանգամանքով Քեստանի, Եղիսիոյ և Կիլիկիոյ կող-
 մերը զործած է (Ուո. էջ 381, 386, 406):

(4) Խաչիկ Խուլ 1042ին ինկաւ թուրքերու դէմ
 մղուած կռիւի մը մէջ իր իշխանիկ որդիին հետ, երբ
 իր երկու որդիները՝ Հասան և Ճնճղուկ կը զոհուէին
 Պուլիս կայսեր ծառայութեան մէջ և վերջը 5000 հայ
 և յոյն զօրքով եկան իրենց հօրը վրէժը լուծել, Խաչիկ
 «մեծ իշխան Հայոց» (Ուո. էջ 105) սխալ հասկացու-
 ղութեամբ մը կարծուած է սոսկ Վասպուրականի թու-
 ոեան զաւառին իշխանը, Brosset (Le beau Ժ. Գ.
 էջ 268) և Schlumberger (Epopée Byzantine III,
 էջ 480) կը յայտնեն թէ անիկա թուոեանի կառավա-
 րիչը չէր, թէեւ Laurent (տես. Byzance et les
 Turcs, էջ 39) կը խորհի թէ ո՛րեւէ բնագիր թոյլ չի տար
 այսպէս վճռական կերպով արտայայտուելու: Սակայն
 Ուոհայեցիին կասկած ներշնչող սա տողը՝ թէ «համբաւ
 հասանէր առ Խաչիկ, եթէ զօրքն այլազգեաց մօրն ի
 զաւառն ք» թուոեան (էջ 105), կու տայ քանի մը
 տուրքներ, որոնք մասնակի կու տան թէ Խաչիկ թուոեանի
 իշխանը չէր այլ Վասպուրականի: Նախ «համբաւ
 հասանէր», լուր կու զար հետեւ տողէ մը, որով յայտնի

Խաչիկ Խուլ «Մեծ իշխան Հայոց»⁴
 († 1042)
 1046-1047 Ստ. Կատապան⁵ († 1047)
 ...-1048 Ահարոն որդի Բուլղարի⁶
 1048-... Գրիգոր Մագիստրոս Բջնեցի,
 որդի Վասակի⁷ († 1058)
 ...-1080 Ապլխարիպ⁸, որ հաւանօրէն
 վերջինն է Բուլղանդացի զինուորական

է թէ ինքն թուոեան չէր և եթէ «քու զաւառ» կ'ըսուի
 հոս սոսկ, քեզի ենթակայ զաւառ ըսել կ'ուզուի ապա-
 հովարար: Թուոեան որ ամէնէն արեւելեան զաւառն է
 Վասպուրականի, բնական է առաջին զաւառը պիտի
 բլլար որ կոմիտոսէր: Եթէ Խաչիկ Վասպուրականի
 իշխանն չէր, իր որդիքը Հասան և Ճնճղուկ իրենց կող-
 մանէ գոռեղեքով Եւրոպայի մէջ պիտի չկարենային ծա-
 ոայել Միքայէլ կայսեր (Ուո. էջ 105) «անշուշտ բիւ-
 զանդական քաղաքականութեան համաձայն օր մը իրենց
 աշխարհը կառավարելու համար՝ կայսեր հաւատարիմ
 ծառայութեան մէջ մնալով» (Գուրեան. Ազգ. պատմ.
 էջ 385): Նոյնպէս նշանակելի է որ եթէ Խաչիկ բիւ-
 զանդացի պաշտօնատար մը չէր, բիւզանդացիք անոր
 վրէժը լուծելու հետամուտ պիտի չբլլային:

(5) Ստեփան Կատապան հակառակած է թուրք բար-
 քարոսներու Վասպուրականէն անցքին և սպանուած
 է (Ուո. էջ 115-7. Սմբատ էջ 65-66): Ասոր համար
 ալ որոշ չէ ըսուած թէ «Արեւելից կուսակալ» կամ
 «Վասպուրականի Գաւառագետ» էր, սակայն ղեկաւ-
 րէն կարելի է այս հետեւութիւնը հանել:

(6) Լաստիվերցի (էջ 70) ասոր համար կ'ըսէ «որ
 ունէր կողմն Վասպուրականի»: 1048ին փոխադրուած է
 Անի իրբեւ իշխան «տանն Հայոց», Մագիստրոս տիտ-
 զոսով:

(7) Ահարոնի յաջորդած է Գր. Մագիստրոս որ ունէր
 թերեւ աւելի ընդարձակ իշխանութիւն մը, փասնի
 անիկա տէր էր «Վասպուրականի և Տարօնի և Մա-
 նգիկերտի և Արծիւի, Բերկրոյ, Միջագիտաց» և էր
 «Մոնոմախին Մագիստրոս, Վեստ (հանդերձագետ) և
 Դուկ»:

1051ին տակաւին պաշտօնի վրայ էր քանի որ Կէ-
 չառոյցի Վանքին Ս. Աստուածածին տաճարին հա-
 բաւային պատին վրայ զոհուած արձանագրութեան մը
 մէջ կը յիշուի իւր «Կիտուն» (պատուական պաշտօն,
 կայսրը զգնատաւորող) և «դուկ» Վասպուրականի և
 Տարօնի: Մագիստրոս Վասպուրականէն փոխադրուած
 է Արեւմուտք և Միջագետքի դուքս եղած է: Իր յա-
 ջորդները յայտնի չեն:

(8) Ապլխարիպ, որդի Հասան իշխանի և թուրք Խաչիկ
 Խուլ իշխանին, 1080ին Տարօն փոխադրուեցաւ:

հրամանատարներուն, որոնք անուանապէս
 կը կառավարէին երկիրը, մինչ իրական
 իշխողներն էին հայ բնիկ իշխանները,
 որոնց ամէնէն զլխաւորներէն մէկը եղած
 է իրական կամ երեւակայական Արծրու-
 նինիւրու տունը, որ բաւական երկարատեւ
 իշխանութիւն մը ունեցած է Վանի շուրջը,
 մասնաւորապէս Ամիւկի⁹ անառիկ բերդին
 մէջ և Աղթամար կղզիին վրայ: Ասոնք
 չէին հետեւած Սենեքերիմ Արծրունի թա-
 զաւորին և յամառած էին մնալ Վասպու-
 րականի մէջ: Արդարեւ «ի սակաւուց
 մնացեալ էին ի պակասաւոր իշխանացն
 Հայոց և բռամբ ունէին զամուրս բերդից
 և քարանձաւաց» (Թ. Արծրունի տպ.
 Պուլիս 1852, էջ 343): Այսպէս «Այլ
 ոմն երեւելի տոհմակից... արքային Սե-
 նեքերիմայ մեծի և ... անուանակից հաւուն
 իւրոյ Սենեքերիմ անուամբ և եղբայր
 նորա մեծ իշխանն Դերենիկ», որոնք կը

տիրէին «հայրենի բնիկ զաւառացն իւր-
 եանց Վասպուրականի և ի դիմի հարեալ
 այլազգեացն ոչ տային թոյլ աւերել զաշ-
 խարհն, զի ունէին զանմատոյց ամրոցն
 զՃամիրամաշէն զաւառն Վան և զերկնա-
 պիշ և զպարանոցատանջ զանառիկ բերդն
 զԱմուկ, առ ոչինչ համարելով զյարձա-
 կումն այլազգեացն յարաժամ, այլ հանա-
 պագօր ի կրունկն դարձուցանէր օգնա-
 կանութեամբ Աստուծոյ» (Թ. Արծրունի
 էջ 344):

Ուրեմն 1018ին Յովհաննէս Սենեքերիմ
 թագաւորին (1003-1026) Սեբաստիա
 փոխադրուելէ վերջ Արծրունի Սենեքերիմ
 և Դերենիկ եղբայրներ¹⁰ կը տիրակալէին
 Վան քաղաքին և Ամիւկ բերդին և կը
 կազմէին անկախ իշխանութիւն մը¹¹:

Ինչ վերջ Վան կը զրաւուի և այս իշ-
 խանութեան վերջին ապաստանարանը
 կ'ըլլայ Ամիւկ, որ Առեստ, Կտուց (Չքաս-

(9) Ամիւկ՝ որ Ամիկ, Ամուկ և Համուկ ձեւով ալ
 յիշուած է՝ կը զոհուէր Վանի լիճին հիւսիսային ա-
 րեւելեան անկիւնը և անմատոյց բերդ մըն էր ծովուն
 կոհակներով, մասամբ պատսպարեալ ժայռի մը վրայ
 (տես. Ալեքան, տեղագիր Հայոց Մեծաց, էջ 52): Ամուկ
 մաս կը կազմէր Վասպուրականի Արեւրանի զաւառին,
 որ այսօր Բերկրի զաւառակ եղած է: Գնունիք զաւառը
 Վանի հիւսիսային կողմը (Թիմայի կողմերը) երբեմն
 Ամիւկի բերդին անունով ալ կոչուած է, մասամբ Վան-
 Տօսպի և մասամբ Բերկրի զաւառակ եղած է: Այս
 պատճառով, Ժ. Գ. դարուն Ամուկը կը կարծուէր Գնու-
 նեաց մաս (Յուզակ Չեռագրաց Վասպուրականի, էջ 653.
 629 և 724):

(10) Հ. Ալինեան և շատ ուրիշներ բնաւ չեն տարա-
 կուած Թ. Արծրունիի այս վերջին էջերուն ետեւառա-
 ջութեան վրայ, Հ. Ալինեան ըստ այսմ Սենեքերիմի
 փոխադրութենէն վերջ ի Սեբաստիա ուղղակի իր ազ-
 գականներէն Խեղենիկի իշխանութեան վրայ կը խօսի՝
 անտեսելով Սենեքերիմ և «եղբայր նորա մեծ իշխան
 Դերենիկ» որոնք ապահովաբար Սեբաստիա փոխա-
 դրուած Սենեքերիմէն վերջ տիրացած են իշխանութեան:
 Սենեքերիմ Արծրունի ունէր միայն երկու եղբայր, մին
 Պուրգէն-Խաչիկ և միւսը՝ Աշոտ-Սահակ, որոնք վաղա-
 մեռիկ եղած են: Չեմ ընդունիր պատմական աւանդաբար
 յիշուած Գանիէլը: Կը կարծեմ թէ Սենեքերիմի տեղա-
 փոխութեան պատմութիւնը որ կը հաստատեն Հայ և

օտար պատմիչներ, թուումա Արծրունիի խառնուած էջե-
 րու մէջ Սենեքերիմի և Դերենիկի պատմութենէն ետքը
 դասաւորուած բլլալով, սակէ առաջ եկած է շփոթու-
 թիւն մը:

(11) Օրմանեան Արքեպս. (Ազգապատմութիւն, էջ 1352)
 և Հ. Ներսէս Ալինեան (Գաւառագետիք կարողիկոսաց
 Աղթամարայ) այս մասին տուած են բաւական տեղե-
 կութիւններ, որոնք սակայն իրարու համաձայն չեն,
 վասնզի թուումա Արծրունիի շարունակողին տեղեկու-
 թիւնները շատ խառնակ են և տեսակ մը հանգոյց կը
 կազմեն իրր հետեւանք ետեւառաջութեան թուղթերու:
 Միեւնոյն բնագիրին վրայ հիմնուելով Օրմանեան և Ա.
 Կինեան հետեւեալ կերպով դասաւորած են իշխողներու
 յաջորդութիւնը:

Ըստ ՕՐՄԱՆԵԱՆԻ	Ըստ ԱԿԻՆԵԱՆԻ
Թուոեանի Ա.	Խեղենիկ
Արդմահ (Ա.)	Թուոեանի (Ա.)
Թուոեանի (Բ.)	Թագոս
Թագոս	Թուոեանի (Բ.)
Թուոեանի (Գ.)	Արդմահ
Արդմահ (Բ.)	Ստեփանոս-Աւուկ
	Խեղենիկ

Իմս, աւելի ընդարձակ ժամանակամիջոց մը կ'ընդգրկէ
 և կը ձգտի ընդհանուր շարադրեալ միութիւն մը երեւան
 բերելու, անշուշտ կասկածելի յաջողութեամբ:

տան) և Լիմ կղզիներուն հետ կը վերաբերէր վասպուրականի Առեբանի գաւառին, որ այդ շրջանակի տիրապետող մահմետական ութմանիքներուն կայանը եղած էր երբեմն (Թ. Արծ. էջ 421):

Սենեքերիմի և Գերենիկի իշխանութեան ժամանակը դժուար է ճշգրէլ գծախտաբար: Թովմա Արծրունիի շարունակողը (էջ 344) կ'ըսէ, թէ «ի սոցա ժամանակի երեւեցան գանձք աստուածային նշանին» այսինքն խաչին որ «համբարեալ ի լեւրինն վարագայ» հաւանօրէն ակնարկելով վարագայ խաչին Սեբաստիայէն կրկին վարագ բերուելուն՝ որ կատարուած է 1026ին: Թովմա Արծրունիի շարունակողը յետոյ կը յիշէ Խեթենիկ կամ Հեթենիկ «Տանն վասպուրականի մեծ իշխանն» (էջ 349) իբր «զազգակից արքային Սենեքերիմայ և թագաւորացն ցեղիցն Արծրունեաց» (նոյն):

Ասոր զաւակն է Թոռնիկ իշխան «այր հզօր և պատերազմող և քաջ ի գործ արութեան» (նոյն):

Խեթենիկի միւս երեք զաւակները «գրաւերջանիկ զհովիւն քաջ զՏէր Դաւիթ և զՏէր Ստեփանոս, զմեծ պսակքն եկեղեցւոյ և զանուանակիցն մերոյ Լուսաւորչին զՏէր Գրիգոր, որ և փայլէին ի մէջ տիեզերաց, որպէս զարեգակն ի մէջ աստեղաց» (նոյն), եկեղեցականներ էին և միայն Թոռնիկ էր որ աշխարհական էր և իշխանութեան տիրացած:

Թոռնիկի որդին և յաջորդն էր «մեծ իշխանն» Թադէոս «այր ընտիր ի գործ պատերազմի, որ օգնականութեամբն Աստուծոյ և քաջութեամբն իւրեանց ոչ տային թոյլ ական հատանել յարաժամ յարձակման թշնամեաց և գաւառացն իւրեանց» (Թ. Արծր. էջ 350):

Այս Թադէոս իշխանին զաւակն էր Թոռնիկ (Բ) ըստ Թ. Արծրունիի (էջ 347) «Մեծ իշխանն», որ մարտիրոսացած էր «յաւուր մեծի տօնի Ծննդեան... բազում

արամբք ընտրելովք ի գաւառին Մոկաց ի գեօղն Ատիճանս կամ Աստիճանս»:

Այս արշաւը կը կատարուէր այն ատեն երբ կը գրաւուէր Անին, այսինքն 1065ին երբ Սրահանգ անուն մէկը «եկեալ էառ յաւարի զգաւառն վասպուրական և եկն եկաց մինչեւ ցաւանն վան և զնա պաշարեալ տառապեցոյց ի տառապանս խիստ և զնա եւս մաշեաց ի սուր սուսերի և զբնակութիւնն այրեաց հրով, նոյնպէս և զԱրճէշ քաղաք Գնունեաց գաւառին և ոչ մնաց տեղի ապաստանի քրիստոնէից, բայց միայն յանձնառոյց ամբոցն Ամիւկ և յաստուածարնակ կղզուոյն Աղթամար, որ վայելչացեալ ունին զգեղ վայելչութեան ամրացեալ ալեօք և պարսպեալ խորխտացեալ կոհակօք» (Թ. Արծր. էջ 347. հմտ. Ազգապատում, էջ 1352):

Ուրեմն Ամիւկ և Աղթամար կը շարունակէին տուկալ: Թոռնիկի յաջորդեց իր որդին Արղմանէ «որ իւրով աստուածիմաստ զիտութեամբ առաւելեալ քան զամենայն հարս իւր, նոքա ի գործ պատեւրազմի արի և քաջ, իսկ սա լի իմաստութեամբ և հանճարով վարէր զկեանս խաղաղութեամբ»:

Թ. Արծրունիի շարունակողը ասոր իշխանութեան ժամանակ պատահած դժբախտութիւնները, աւերը, սովը, յիշատակած ատեն կը յիշէ թէ՛ անոր ատենը գրաւուեցաւ Երուսաղէմ Յրէնկներէն: Ուրեմն Արղմանէ Ա. Խաչակրութեան և Երուսաղէմի գրաւման ատեն, որ 1097ին կը նշանակուի, փոխանակ 1099ին —, իշխանութեան վրայ էր, երբ այլեւս բիւզանդացիք ոչ միայն վասպուրականէն, այլ նաեւ Հայաստանէն հեռացած էին, այնպէս որ իրաւամբ բարբարոսներու արշաւին զիմադրելու համար «ոչ գտանէր յոյս և ակնկալութիւն քրիստոնէից, բայց միայն յաստուածասէր և յընտրեալ թագաւորազն արքայէն Պապականութեան և յազգակցէ մեծ և քաջ նահատակէ Մա-

միկոնէին վարդանայ¹² զի աղօթիւք և խնդրուածովք սրբոց հարցն և ազգակցացն զօրացոյց Տէր զօծեալն իւր, զի վարեաց զկեանս իւր խաղաղութեամբ և ընդ ամենայն ումեք զխաղաղութիւն հնարէր, զի տայր ի պէտս հարկացն զկեանս և զստացուած իւր, և ոչ դատէր զիւրան առնուլ ինչ ի պէտս հարկապահանջողաց, ոչ սաստիւ վարէր զիշխանութիւնն իւր և ոչ ահիւ և սպառնալեօք, և ոչ տոկոսիւք, այլ զամենեւեան խնամէր և սիրօք և զթայր որպէս հայր ի վերայ որդոց, (Թովմա Արծրունի, էջ 350-351):

Այլուր Թովմայի շարունակողը զայն կը ներկայացնէր (տես էջ 347-348) Ֆիգիբական, բարոյական և հոգեկան բազմապիսի շնորհներով օծուած: Անոր տրուած Պատուիրապաղատ տիտղոսը յունական կը հնչէ, իսկ «թագաւորազն արքայ» և օծեալ բացատրութիւնները՝ թագաւորական աստիճան կը մակարերեն:

Արղմանէ ամուսնացած էր Ծաղկոտն, Կոքովտի և Անգեղտան իշխան Գրիգոր «Արեւելեան դուկի» աղջկան Մարիամի հետ (1123), որ Աւուզի թոռն էր (Թ. Արծ. էջ 348) և ունեցած եօթը մանչ և հինգ աղջիկ զաւակ (նոյն, էջ 351):

Արու զաւակներէն երիցագոյնը Դաւիթը ապահովարար ինքը կարգած էր Աղթամարի արքայիսկոպոս, և ինչպէս յայտնի է պատմութենէն 1113ին եղաւ կաթողիկոս (Հ. Ակինեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 35 և վարդան, էջ 116):

Մեր պատմիչները առ հասարակ այնպէս կը ներկայացնեն որ Դաւիթ Գրիգորիս փոքր վկայասէրի (1113-1166) տղայութիւնը արհամարհելով ապստամ-

բեցաւ և ինքնագլուխ կաթողիկոս եղաւ, բայց Դարանաղցին (էջ 303) Բարսեղ Անիի կաթողիկոսին Շուր փոխադրուած ան առթիւ կը յիշէ թէ կարգ մը եպիսկոպոսներ մերժած են ճանչնալ իր հեղինակութիւնը, որոնցմէ մէկն էր Դաւիթ, որ վերջը ինքզինքը կաթողիկոս հռչակած էր: Ասիկա անշուշտ կատարուած է իր հօրը Արղմանի քաջալերութեամբ, որ իբր «թագաւորազն արքայ» և «օծեալ» ըստ աւանդական սովորութեան իրաւունք ունէր իր ըզը ունենալու կաթողիկոս մը և ունեցաւ, նոյն իսկ արհամարհելով Սեւերան ժողովի բանադրանքը: Ասիկա կը մղէ մոռանալու՝ թէ Արղմանէ «ամենեւեակ ի աստուածասէր կիրաւադատն» աշխատած էր կերպով մը վերակազմել Արծրունեաց թագաւորութիւնը, վասպուրականի մէջ կազմակերպելով աշխարհիկ և հոգեւոր կրկնակ իշխանութիւնները, երկուքն ալ իր ընտանիքին սեպհակա-

նելով: Աղթամարի կաթողիկոսութեան հիմնարկութեան մէջ դեր մը կատարած ըլլալ կը թուի Մարիամ, Արղմանի կինը, որ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցիին տուած է անգին սրբութիւններ և մասունքներ (Թ. Արծրունի, էջ 310, հմտ. վարդան, էջ 116, Հ. Ակինեան, Գաւազանագիրք, էջ 9):

Արղմանի իշխանութեան շրջանը, որ խաղաղ էր, եղած է կազմակերպչական շարժումի ժամանակամիջոց մը:

Թ. Արծրունի (էջ 354) կը հաստատէ թէ անիկա իր կրտսեր որդին Ստեփանոս Աւուզը Ամիկի տէր կարգած է (հմտ. Հ. Ակինեան, գաւազանագիրք էջ 33-34) իր կենդանութեան, վասնզի կ'ըսէ թէ «մեծ

(12) Բնագիրը ընթերցելու համար հասկցուի թէ Քրիստոնէից միակ յոյսը Պատուիրապաղատն էր՝ ազգական վարդան Մամիկոնեանի կամ անոր հետ նաեւ վարդան Մամիկոնեանի ազգական ուրիշ մը: Եւ աւելի կը հակիմ երկրորդ տեսութեան, վասնզի Արղմանի Մամիկոնեանց

հետ ազգականութիւնը չէ յիշուած, և այդ օրերուն Հայաստանի հարաւին մէջ Արղմանի իշխանութեան չափ, եթէ ոչ ալ աւելի՝ զօրաւոր էին Սասունի մէջ Թոռնիկեանը, որոնք Մամիկոնեան սերունդէն էին: Յոյները Թոռնիկեան իշխաններուն ալ տիտղոսներ չապլած էին:

և ամենիմաստն Աբղղմսեհ կիրապա-
ղատն¹³ բաժանեաց զհայրենիան իւր և ետ
ի ձեռն որդւոյ իւրոյ Աւուզի զերկնանման
և զանաորիկ ամրոցն զԱմիւկ, զի նա կարող
էր ի զիմի ունել անօրէն ազգացն իսմայէ-
լացւոց և նա առաւելեալ իմաստութեամբ
քան զամենայն զհարս իւր » (նոյն,
էջ 354):

Բայց դժբախտութիւն մըն է, որ պատ-
մագիրը միայն Ստեփանոս Աւուզը ներ-
բողելու համար, կարծես վարձուած,
Աբղղմսեհ կիրապաղատի զաւակներէն
Դաւիթ կաթողիկոսէն և Ստեփանոսէն
զատ միւս հինգ մանչ և հինգ աղջիկ զա-
ւակներուն խօսքը բնաւ չ'ընէր:

Սակայն նկատի ունենալով ժամանակին
տիրող աւատապետական կարգերը՝ կըր-
նանք կարծեմ հետեւեցնել թէ անիկա ինչ-
պէս իր պետութեան հոգեւոր բարձրագոյն
իշխանութիւնը տուած էր իր երէց որդւոյն
Դաւիթին, և Ամիւկ բերդին տիրականու-
թիւնը կրտսեր որդւոյն Ստեփանոս Աւուզի,
ապահովաբար միւս որդիներուն ալ տուած
էր այլ վայրեր:

Ասիկա կը հաստատուի պատմագրին
զրէն վրիպած արտայայտութիւններով:
Ան կ'ըսէ թէ Աբղղմսեհ տեսաւ « զորդիս
իւր փառաւորս և ամենագովս, զոմն հո-
գեւոր և մարմնաւոր փարթամութեամբ
ճոխացեալ և յաջորդեալ յաթոռ հայրա-
պետութեան...: Եւ զմիւսն ետես տէր և
իշխան և պայծառացեալ փառօք և բա-
րեբախտեալ և յաջողածեռն... յամենայն
գործս և զայլ ևս զուտերս և զյատերս
և տես ի փառս և ի պատիւս » (Թ. Արծ.,
էջ 355):

Այս տողերը շատ յատկանշական են
և ցոյց կու տան թէ միւս որդիքն ալ զիր-
բերու հասած էին, սակայն պատմագիրը

զանց ըրած է զանոնք յիշել իր հերոսը
փառաբանելու համար:

Ուրեմն Աբղղմսեհ իր պետութիւնը զա-
ւակներուն մէջ բաժնելէ և տեսնելէ վերջ
« զորդիս որդւոց իւրոց », այսինքն թոռ-
ներու տէր ըլլալէ վերջ, « բարեօք ծերու-
թեամբ » կը մեռնի 1121ին և կը թաղուի
Աղթամարի Ս. Խաչ եկեղեցիին դուռը:
Երկու տարի վերջ իր կինը Մարիամ եւս
մեռաւ և թաղուեցաւ նոյն տեղը:

Աբղղմսեհի մահէն վերջ, ընդհանուր
կերպով, ինչպէս Հայաստանի ուրիշ նա-
հանգներուն, նոյնպէս Վասպուրականի
մէջ կացութիւնը սպառնալից կը դառնայ
վասնզի Աւփաւանի աշխարհակալած և
Մելիք Շահի աւատապետական կարգերով
կազմակերպուած սելճուկեան մեծ կա-
րութիւնը կը կազմալուծուէր և երեւան
կու գալին պզտիկ տանուտէրութիւններ և
հողատէրութիւններ (Seigneurie), որոնց
գոյութեան կը հանդուրժէին սելճուկները:

Այս խառնակ վիճակի մէջ եւս կը տո-
կար Ստեփանոս Աւուզի Ամիւկի իշխանու-
թիւնը իբր « զմեծ վէմն հաւատոյ » զոր
« ոչ կարացին խախտել » (նոյն, էջ 355),
վասնզի անիկա « մնաց միայնացեալ ի
մէջ Հայաստան աշխարհիս իբրեւ զնաւ
ի մէջ մրրկեալ ալեաց ծովու, ոչ առնելով
օգնականութիւն յումեքէ, ոչ ի թագաւո-
րաց և ոչ ի իշխանաց և ոչ ի մեծամեծաց
և ոչ ի հարցն, ունայնացեալ ի ստա-
ցուածոց և թափուր մնացեալ յամենայն
ընչից » (նոյն, էջ 355-56):

Ստեփանոս Աւուզ « զաւերեալ պա-
րիսպն և զշէնան, զոր յառաջագունիցն
անփոյթ էին արարեալ, սա վերստին նո-
րոգեաց բազում աշխատութեամբ » (նոյն,
էջ 356), այսինքն Ամիւկը ամրացուց:
Պատմագիրը կը յիշէ նաեւ իր քաղաքա-
գիտութիւնը. « Դարձոյց զժամս երկկոյա-
ցեալ ի հասարակ օրն », և « պէս պէս
հնարիւր անցուցանէր զկեանս իւր, և հաշ-
տեցուցանէր ընդ իւր զանհաշտ թշնամիսն
զազգն Ելիմացւոց, և ի նոցանէ առնոյր

պարգեւս և մեծութիւն, և փառաւոր և
երեւելի լինէր յաչս անհաւատիցն իւրով
բազմիմաստ գիտութեամբն: Ոչ խնայելով
յինչս և ի ստացուածս իւր, այլ զուար-
թամիտ սրտիւ տայր զքրտունս իւր վասն
փրկութեան քրիստոնէից, զոր տալով ի
հարկս այլազգեաց, զոր կարգելով հե-
ծեալս և տալով նոցա ռոճիկս առնէր
խաղաղութիւն ամենեցուն » (էջ 356):

Ինչպէս կը տեսնուի՝ անիկա լեզու
գտած էր թուրքերու հետ համաձայնելու
և անոնցմէ պատուուած: Հաւանօրէն ա-
նիկա հողատէր-ճորտ մը դարձած էր հար-
կատուութեամբ մօտակայ մահմետական
զօրաւոր իշխանութեան մը, — որ հաւա-
նօրէն Մանագլեբատի Շահի Արմէններու
իշխանութիւնն էր, — ինչպէս կը մական-
բերուի պատմագրի իսկ խօսքերէն և կը
հաստատուի յաջորդ անցքերով: Պատմա-
գիրը կ'աւելցնէ թէ « սա ունէր ընդ իւր
սեպուհք զազատք և զորդիս ազատաց
զմեծամեծաց և զնախարարաց յամենայն
գաւառաց, և փայլէր ի մէջ տիեզերաց
իւրով ազատագունդ հեծելով » (էջ 356):

« Տուեալ նմա շնորհս ըստ հայրենի
նախնեացն իւրոց զԱրմրունեացն, և զօ-
րացաւ սա զօրութեամբ անպարտելի, ըստ
տուեցելոյ նմա յԱստուծոյ զանմատոյց
ամրոցն զԱմիւկ, և նա իւրով ամենիմաստ
գիտութեամբն ընդ ամենայն ումեք զխա-
ղաղութիւն հնարէր, զի թերեւս խաղա-
ղացի կեանք իւր և իւրոցն ի խռովու-
թենէ վրդովման ալեացն ծփելոց: Ի սորա
խաղաղութեան ժամանակի շփոթեալք ա-
մենայն աշխարհս, եւս առաւել գաւառն
վասպուրականի ոչ խաղաղանայր, այլ

եւս քան զեւս նեղէր ի տագնապս տարա-
կուսի, և սա և զամրոցն իւր պահեալ
աջին Աստուծոյ », « Սա եղեւ պատճառ
շինութեան տանն Վասպուրականի » (էջ
357), և անոր կու տայ շարք մը գովեստ-
ներ, զայն դարձնելով « սովելոց հաց », « փախուցելոց պատսպարան », « գերելոց
գերեզարձ », և « մարբիչ զամենայն ար-
տօսը յամենայն երեսաց », « ամենայն
տեսողաց բաղձալի և անտեսից ցանկալի »
եւն...:

Անիկա արծարծելու համար իր նախ-
նեաց փառքը և ներքողել տալու համար
իր գործը թովմա Արմրունիի պատմու-
թիւնը շարունակել տուած կը թուի:

Ամիւկի այս փառաւոր իշխանը, հիմ-
նուելով 1161 թուականով յիշատակա-
րանի մը մէջ անոր տրուած « տէր » տիտ-
ղոսին վրայ (տես. Յ. Թովմեան ցուցակ
ձեռագրաց Խաչիկ վրդ. Գաւառի Բ. էջ 28)
վերջը եկեղեցական եղած և Աղթամարի
կաթողիկոսական աթոռին վրայ իր եղբորը
յաջորդած կը կարծէ Հ. Ներսէս վրդ.
Աղինեան (Գաւազակագիրք, էջ 36), անոր
տալով 1165-1185-86 պաշտօնավարու-
թեան միջոց մը, բայց շատ հաւանական
չէ, քանի որ տէր տիրոջը կրնար տրուիլ
նաեւ իշխանի մը¹⁴:

Ստեփանոս Աւուզ իշխանին, Ամիւկի
մէջ յաջորդած է Խեղենիկ (Բ.) « զլու-
սածաղիկ տղայն, զշառաւիղն լուսոյ,
զանուանակից հաւուն իւրոյ, ... որ գեղով
վայելչութեամբ իւրով, յաչս ամենեցուն
հաճոյ և սիրելի թուէր » (Թովմա Ար-
մրունի, էջ 356):

Այս Խեղենիկի ժամանակ կ'երեւի թէ

(14) Թովմայի շարունակողին կողմէ տրուած տեղե-
կութիւններու համաձայն Ստեփանոս-Աւուզ 1121էն
կու թիւններու համաձայն Ստեփանոս-Աւուզ 1121էն
այսինքն հօրը Աբղղմսեհի մահէն բաւական առաջ, և
հաւանօրէն իր եղբոր՝ Դաւիթի կաթողիկոս ընտրուած
առնել, 1113ին, Ամիւկի իշխան կարգուած էր: Եթէ
նուագագոյն 20 տարեկան ըլլար՝ 1093ին ծնած կ'ըլլար,
և 1165ին իր ենթադրեալ կաթողիկոսութիւնը առած

առնել արդէն մերձ 70 տարեկանի և 95 տարեկանին
մեռած, Պատմագիրը սակայն կ'ըսէ թէ Աբղղմսեհ երբ
մեռաւ՝ տեսած էր թոռներ, հետեւաբար Ստեփանոս ա-
ւելի տարեց էր հաւանօրէն, այդ պարագային աւելի
քան հարիւրամեայ մեռած պէտք է ըլլայ, ինչ որ հա-
ւանական չէ:

(13) Դիտելի է որ Պատմագիրը պարզապէս
է կիրառապաշտի, ինչ որ մէկ աստիճան աւելի բարձր
էր:

շատ աւելի տագնապալի եղած է Վասպուրականի մէջ հաստատուած այս «թագաւորութեան» վիճակը, վասնզի արեւելքէն ճնշումը սկսած էր սաստկանալ: Այնպէս որ հարաւային Հայաստանի մէջ իրենց անկախութիւնը պահող Վասպուրականի Արծրունի իշխան – թագաւոր խեղենիկ և Սասունի Մամիկոնեան – թոռնիկեան վիզէն, զիմագրաւելու համար Պարսկաստանէն Եւտիուզ Աթաբէկի կատարած յարձակումին նման արշաւներու – զոր Խլաթի Շահի Արմէնը տեղական իշխաններու գործակցութեամբ վանած և խաղաղութիւնը պահած էր – խոհեմութիւն համարեցին մտնել այն համադաշնակցութեան մէջ՝ որ Միհրան կամ Սոկման Բ. Նասրէդդին Մուհամմէտ (1128–1185) կը ջանար ստեղծել աւատապետական կարգերով զօրաւոր պետութիւն մը հիմնելու համար, առանց ֆեոդալ տեղական տիրող տուներու: (Վարդան, էջ 126, Միքայէլ Ասորի, էջ 270)¹⁵: Այս կերպով անոնք ալ հաւանորէն տոկացին մինչև ժ. դարուն սկիզբը, մինչև որ Շահի Արմէններու պետութիւնը արեւելքէն և հարաւէն եղած ճնշումին առջև քայքայուեցաւ և ձինկիւ խանի Մոնկոնները Հայաստանի տիրացան:

Այլեւս զժառանգաբար այս տան պատմութեան շարունակութիւնը չունինք:

(15) Վարդան 1132-ին 1140 ժամանակամիջոցին կը գրէ թէ Շահի Արմէնը «էսո զԱմուկ ի Խաթինկայ և Սասունը՝ ի վեղենայ ամենայն վանորէիքն և պահէր խիստ խաղաղութիւն զամս վաթսուն», որ միշտ կը համապատասխանէ Սոկման Բ. Նասրէդդին Մահմէտի իշխանութեան տարիներու, որոնք 60 են (1128–1185): Գալով թոռնիկեան վիզէնի որ 1169-ին յիշատակարանի մը մէջ կը յիշուի (Թորոս Աղբար Բ. 308–309) «պատուելէսիմոս» տիտղոսով, հաւանորէն կը յաւանդէր ինքզինքն կոչելու «թագաւոր», ինչպէս կինը «թագուհի»: Աս ալ խեղենիկի պէս հնազանդած է Շահի Արմէնին: Միքայէլ Ասորի (էջ 476) կը գրէ. «Բերդեր, զոր ունէին Հայք յերկիրն Սասնոյ, նեղեալ ի Մուսթար կընայ Ամիրայէն՝ տուն ի Շահի Արմէն, յամենայն

Տիրող ընդհանուր խառնակութեան մէջ չենք գիտեր թէ ինչ դեր կատարած է Ամիւկի իշխանութիւնը, միայն ծանօթ է որ անիկա երկու մասի բաժնուած է, վասնզի խեղենիկ (Բ) Արքայուն իր Մարիամ¹⁶ անուն զուտը կնութեան տուած է Արծրունի արքայական սերունդէն Պարոն Սէֆէտին Արքայունի՝ իբր օփա տալով Աղթամար կղզիին կէսը, բայց վերջը «ի ծերանալ խեղենիկին ի չքաւորութեան անձինն իւրոյ դարձեալ ծախեց զկէսն այլ վերստին Պարոն Սէֆէտին, և առեալ զգինն բազում ոսկիս, ի պէտս մարմնաւոր պիտոյից իւրոց» (Թովմա Արծրունի, էջ 362):

Այսպէս, Ամիւկի խեղենիկ կը կորսնցընէր Աղթամարը ուր Սէֆէտին իբր տէր և տիրական կը գործէ, հոն առանձին իշխելով, ինչպէս նաեւ իրեն սեփականելով Աղթամարի կաթողիկոսական աթոռը, ժ. դարուն առաջին քառորդին (Թովմա Արծրունի, էջ 362. Հ. Ակինեան Գաւազանագիրք, էջ 38):

Ասկէ վերջ չենք գիտեր թէ խեղենիկ որքան ատեն կրցած է տոկալ: Ինքը կամ որդին Ալուզ կորուսած պէտք է ըլլան իրենց իշխանութիւնը:

Այս Ալուզի որդին պէտք է ըլլայ 1245 թուականով Հոռոմոսի Վանքին մէկ արձանագրութեան մէջ յիշուած խեղենիկը

Խլաթայ, զայն որ ունէին ի հին ժամանակաց»։ Ասորի բնագիրը շատ աւելի պարզ է. «Հայք կը գրաւէին ամբողջ Սասունի լեռան մէջ բազմաթիւ սերունդներէ ի վեր: Այս տարի թուրքերը զանոնք նուաճեցին, Մուֆարգինի էմիրը, վերջապէս անոնց դէմ պատերազմեցաւ, զանոնք ճնշեց և ի վերջոյ սովի մատնեց: Անոնք ինքնաբերաբար տունն ամուր վայրերը Շահ-Արմէնին, Խլաթի տիրոջ» (Թրդ. Charot. էջ 361): Ասկէ յստակ կ'երեւի թէ հարաւային Հայաստանի մէջ երկու նոյնիսկ թագաւորութեան ձգտող տուներ, ինչպէս զուլե ծած են, իրենց զոյութիւնը փրկելու համար:

(16) Այս անունը առնուած է յիշատակարանէ մը (Բիւզանդիոն, Թ. 1193):

(Գ.), որուն արձանագրութիւնը ոչ մէկ տիտղոս կու տայ, ինչ որ փաստ մըն է թէ այս ընտանիքը կորուսած էր իր իշխանութիւնը¹⁷: Հաւանորէն Ալուզ կամ իր որդին խեղենիկ, զրկուած իշխանութենէ, անցած են հիւսիսային Հայաստան և հոն խեղենիկ (Գ.) իր կնոջ Մարչանի (Մերձան-Մարգարիտ) հետ նուիրած էր Անիի մերձակայ Հոռոմոսի վանքին թեւանի շամբը «որ իշխանն» այս կողմերուն իրենց տուած էր:

Հետեւաբար Մոնկոններու արշաւանքին պատճառած տակնուվրայութիւններուն միջոցին Վասպուրականի հայ իշխանները իրենց անկախութիւնը կորսնցուցած էին:

Բայց ինչպէս կ'երեւի, աւատապետական կարգերէն օգտուելով, Վասպուրականի հայերը կրկին ջանքեր ըրած են պահելու հայկական իշխանութիւնները, այս անգամ իսլամացած Հայերու զխաւորութեան տակ:

(17) Հ. Ակինեան (Գաւազանագիրք, էջ 38) այս խեղենիկը կը նշանակէ Հոռոմոսի Վանքին 1245 թուականով մէկ արձանագրութեան մէջ յիշուած խեղենիկի (որդի Ալուզի) հետ, ինչ որ շատ հաւանական է՝ երեւի Հ. Ակինեանի տեսութեամբ խեղենիկ անուագն 1161-ին պէտք է Ամիւկի իշխանութեան տիրացած ըլլայ, քանի որ Ստեփանոս-Ալուզ այս թուականին եկեղեցական և 1165-ին կաթողիկոս եղած կ'ենթադրուի: Արդ, եթէ 1161-ին 20 տարեկան եղած ըլլար (ենթադրելով թէ իր հայրը 50 տարեկանին ունեցած էր զայն – ինչ որ իր կարգին ըիջ մը անհաւանական է –) ուրեմն 1145-ին ծնած էր և 1245-ին հարիւրամեայ, երբ Հոռոմոսի Վանքին կ'ընէր այդ նուիրատուութիւնը, Հոռոմոսի Վանքին նուիրատուն կրնայ միայն թուր ըլլայ Ամիւկի խեղենիկ Բ. իշխանին, որ կրնայ որդի մը ունեցած ըլլալ իր հօր անունով: Ալուզ և անկէ ծնած խեղենիկ Գ.՝ պարզեաւորուն Հոռոմոսի:

Այլապէս կը մնայ անմեկնելի:

Այսպէս խորհելու ուրիշ պատճառ մըն ալ ունիմ: Հ. Ակինեան Գանիէ Աղթամարցիէն առնելով (Թովմա Արծրունի, էջ 362) կը պատմէ թէ խեղենիկ իր աղջիկը՝ Մարիամը՝ ամուսնացուցած էր Սեֆիդին Արքայունի հետ և ապա դրամական կարօտութեան մէջ ինչաւով՝ ծախած էր Աղթամար կղզիին կէսը, առաջին կէսը օփա տալէ վերջ իր աղջկան: Եթէ այսքան անձկութեան մասնուած մէկն էր խեղենիկ Ժ. դարուն առաջին

Այսպէս, ժ. դարուն վերջերը կը յիշատակուի Եզդին ամիրա մը «յազգէն Սենեքերիմեանց» որ կը տիրէր Ռշտունեաց Սատանին իբր մարաց (քիւրդերու) ամիրա (Թովմա Մեծոփեցի, էջ 13, 30, 47, 69, 71): Մեծոփեցի որ ժամանակակից է, կը վկայէ թէ շատեր իր օրերուն «եւեալ ի հաւատոյ դարձան յանհաւատութիւն»: Ասոնցմէ մէկն պիտի ըլլայ Եզդին կամ իր նախնիքը, որոնք Սենեքերիմի սերունդէն էին, ուրեմն նախկին բնիկ իշխող ընտանիքին կը պատկանէին: Եզդին, ինչպէս Թովմա Մեծոփեցիի պատմութենէն կը քաղուի բաւական ընդարձակ իշխանութիւն ունէր: Թովմա զայն կը ներկայացնէ նոյնիսկ տէր Վանի (էջ 30) և զայն կը կոչէր «բարեբարոյ և աշխարհաշէն»¹⁸. Նոյն ընտանիքէն էր Սեւդին, Բերկըի տէրը, զոր «պիղծ և անհաւատ քիւրտ» կը կոչէ թ. Մեծոփեցի, միեւնոյն ատեն ըսելով թէ «ի տանէ և

բարորդին, ինչպէս ցոյց կու տայ Հ. Ակինեան (եռյն, էջ 39), ինչպէս երկրորդ քառորդին շնորհ ստացած հոգային ստացութիւն մը կրնար նուիրել Հոռոմոսի Վանքին:

(18) Թ. Մեծոփեցիի հաւատարմին հակառակ՝ Չամչեան (Գ. էջ 424) Վանի իշխանը կը կոչէ Փիւրի պէկ, որուն հնազանդութիւնը ակնկալեց (Թովմա Մեծոփեցիի պատմութեան հակառակ) Վանի պէկ հնազանդութիւն չայտնեց, բայց վերջը տեսնելով որ ճար չկայ՝ հնազանդութիւն յայտնեց, սակայն ուշ էր, ուստի Լէնկթիմուր զայն կալանաւորեց, Վան պաշարուեցաւ 40 օր և վերջը անձնատուր եղաւ (1387 Սեպտ. 5): Լէնկթիմուր բնակչութիւնը պարսկապէս վար նետելով սպաննեց, Չամչեան մինչև հոս Մեծոփեցիի համաձայն պատմելէ վերջ, մեզի անծանօթ աղբիւրէ մը քաղելով կ'ըսէ թէ այդ քաղաքով մոնղոլներուն մէջ էր նաեւ Փիւրի պէկ իշխանը «որոյ ի հօսին զարս հինգ զհօրազոյնս ընդ իւր յափըռ տակեալ և քարշեալ ընկէց ի վայր» և ասոր վրայ Լէնկթիմուր փառացեալները հինգական հողի իրարու կապուած պարսկապէս վար նետեց. Փոխանակ Եզդինի՝ Փիւրի պէկ անունը գործածուած ըլլալը և այսպէս սպաննուած ըլլալը մեզի խորհելու կու տայ թէ Եզդին՝ որ վերջն ալ պիտի յիշուի 1392-ին Վանի գրաման ատեն Վանքի իր իշխանութեան տակ չունէր և վերջն էր որ Բերկու ստացած է ի վարձ իր հաւատարմութեան:

ազգէ՝ Եզդեանի էր ան (էջ 92), ինչ որ կը նշանակէ թէ ան ալ Սենեքերիմի սերունդէն էր:

Ուրեմն իսլամացած Արծրունիներ իբր քիւրտ կը տիրակալէին Վանի ծովուն արեւելեան եզերքին 1380-1430 թուականներուն, և կը շարունակէին Արծրունի իշխանութիւնը, կերպով մը Բաշեշէլով իրենց գոյութիւնը:

Եզդին, ինչպէս կը թուի, բաւական ուժով էր և կը հնազանդէր իբր աւատապետ Ատրպատականի Ահմէտ Ամիրային, որուն վրայ երբ յարձակեցաւ Լէնկթիմուր՝ Սուլթանիյէի ամիրա Եղիլի օգնութեամբ, անիկա Ահմէտը փախցուց Պաղատա (Թ. Մեծ. էջ 13) և երբ Լէնկթիմուր Վասպուրական եկաւ 1387ին հնազանդութիւն պէտք է յայտնած ըլլայ և վերահաստատուած իր Ուշտունեաց Ոստանի իշխանութեան մէջ, նման շատ մը ուրիշ տիրապետներու, որոնք երբ հնազանդութիւն յայտնած և իսլամացած են՝ իրենց իշխանութիւնը պահած էին¹⁹:

1395ին երբ Լէնկթիմուր հեռացաւ Հայաստանէն՝ Վասպուրականի ամիրաները իրարու դէմ ելան: Գարա Եուսուֆ յարձակեցաւ Արճէշի (Քաջբերդէն) Սահանդ ամիրային վրայ, և գրաւեց Արճէշը:

Եզդին կամ Ամիրէզդին՝ Ոստանի ամիրան, հակառակ ասոր մնաց հաւատարիմ թաթարներու և դէմ ելաւ Եուսուֆի և վանեց զայն Արճէշէն, սակայն վերջը պարտուեցաւ և խոհեմութիւն համարեց հաշ-

տութեան դաշինք կնքել անոր հետ (Թ. Մեծ., էջ 47), մինչ Բասենի ամիրան՝ Աթալիի օգնութեան կու գար իրեն: Ասիկա հաշտութիւն կնքուած տեսնելով երբ Աղու գիւղը թալանելով կը հեռանար, հայ երիտասարդներ Յովհաննէս անուն անձի մը զլիաւորութեամբ զինքն հետապնդեցին և զերինքը և աւարը փրկեցին:

Լէնկթիմուր 1396ին վերստին եկաւ Հայաստան և անկէ վանեց Եուսուֆը որ Սիւրիա ապաստանեցաւ (Թով. Մեծ. էջ 48-49): Լէնկթիմուր Հայաստանի կառավարիչ նշանակեց 1397ին իր ազգականներէն Շէխ Ահմէտը, որ շինարար վարչութեամբ մը կառավարեց Հայաստանը 11 տարի, ճանչցուելով նաեւ իբրեւ Սուլթան:

Եզդին՝ Ոստանի ամիրան երբ բնիկ իշխող կարեւոր դերք կը գրաւէ և ի նպաստ բնիկ իշխաններուն հաշտարար դեր կը կատարէ, միջնորդելով Միրանշահի առջեւ որ Բաղէշի ապստամբ Խալահիմ ամիրայի յաջորդ նշանակէ Խալահիմի եղբոր «սիրող քրտոտնէից» Ամիր Շարաֆին փոքր տղան՝ Շամշատինը (Մեծ. էջ 69-70): Նոյնիսկ ինչպէս ըսի, շատ հաւանորէն անիկա Վանի ալ տիրած է թաթարներու կամքով:

Այսպէս, Հայաստանի մէջ բնիկ իշխանները կը մնային իրենց երկիրներուն մէջ՝ իրենց գլուխը ունենալով թաթար կուսակալ մը, որ իր կարգին ստորադասուած

(19) Եզդինի դերքին փափկութիւնը իբրեւ նորագործ իսլամ կամ իբրեւ հարկադրանքի տակ հնազանդող շատ պայծառօրէն կ'երևի երեք վկայարանութիւններէ:

Այսպէս, 1391ին Վանի մէջ իսլամացած Եղիսարէթ Խառարապետի վկայարանութեան մէջ կը շեշտուի թէ ինքն բնաւ կարեւորութիւն չէ տուած իսլամներու պահանջին և իր կինը «Լիւր և յանդուգն» թիւրքմենուհի կամ քրդուհի մը՝ Փաշա խաթուն անուն, ինքն պատճառ եղած է անոր վկայուելուն (Ազգայնատուն, էջ 1986): Նոյնպէս Աղթամարի Զաքարիա կաթողիկոսի (1378-1393 Յունիս 25) Ոստանի ճափէր դատարարի խօս-

քին կարծես ակամայ կարեւորութիւն տուած էր և զայն կրօնափոխութեան հրաւիրելով - ուրիշ կերպ չկրնալով - փրկել ուզած է, սակայն կաթողիկոսը չէ համակերպած և խուժանը առանց իր հրամանին սպաննած է կաթողիկոսը (Ազգայնատուն, էջ 1993-1994): Իսկ 1396ին Ոստանի մէջ թաթար Մոկացիի նահատակութեան զլիաւոր պատճառը՝ իր կինը Փաշա խաթուն կ'ըլլայ (Ազգայնատուն, էջ 2010): Նկատելի է որ Եզդին թէ՛ կաթողիկոսին և թէ՛ թաթար Մոկացիին պատուով թաղուել արտօնած է, ինչ որ նշանակելի է:

էր Լէնկթիմուրի Միրանշահ որդիին որուն իշխանութեան տակ կը գտնուէին Ատրպատականը, Հայաստանը, Վրաստանը և Միջագետքը:

Բայց երբ Լէնկթիմուր մեռաւ 1406ին, Գարա-Եուսուֆ դարձեալ եկաւ Հայաստան և կրկին հարաւային Հայաստանի տիրակալեց: Ոստանի ամիրան Եզդին թէեւ փորձեց իր հաւատարիմ ճորտի պարտականութիւնը կատարել իր որդւոյն Մեկիք Ահմէտին²⁰ հետ 12000 զօրքով անոր դէմ երթալով, սակայն զօրքը Քիւրտեքէ բաղկացած ըլլալով, լքեց Եզդինը և իր որդին, և անցան Եուսուֆի կողմը և Եուսուֆը տիրեց Ուշտունեաց գաւառին: Եզդին և իր որդին Մեկիք Ահմէտ «բարեբալոյ և սիրող և ողորմած Քրիստոնէից» պարտաւորուեցան հնազանդիլ և հպատակիլ Գարա-Եուսուֆի: Լէնկթիմուրի որդին և յաջորդը Միրզա Մուսխէտտիս Շահրուխ (1406-1447) տեսնելով Գարա-Եուսուֆի յառաջդիմութիւնները՝ մեծ պատրաստութեամբ պիտի գար անոր վրայ, երբ Եուսուֆ մեռաւ և իրեն յաջորդեց իր որդին Խակէնտէր (1417-1438) որ նախընտրեց Հայաստանի տիրապետութիւնը «Շահի Արմէն» տիտղոսը կիրարկելով:

Խակէնտէր իբր անհաշտ թշնամի Լէնկթիմուրի և Ազգոյունլու ընտանիքին կռուեցաւ անոնց դէմ սաստկութեամբ, մաս-

նաւորապէս Շահրուխի դէմ, մեծ պատուհաս մը դառնալով Հայաստանի համար (Մեծ. էջ 108): Վասպուրական ալ ազատ չմնաց իր հարուածներէն: Ան 1423ին մտաւ Ուշտունիք և կալանաւորեց Ոստանի Ահմէտ ամիրան, որ իր հօրը Եզդինի յաջորդած էր և շղթայի զարկաւ զայն (Մեծ. էջ 84): Պաշարեց Վանը չորս ամիս, սակայն չկրցաւ զրուել և դարձաւ Սիւնիքի ճամբով Դարէժ, ճամբան Երնջակի մէջ սպաննելով Ահմէտը՝ Սենեքերիմեան տոհմէն (Մեծ. էջ 84):

1425ին կրկին Վան եկաւ և կրկին պաշարեց քաղաքը որ կ'երեւի ապստամբած էր «յազգէն Սենեքերիմեան» Եզդին ամիրայի մէկ որիւր որդւոյ Ասիլի զլիաւորութեամբ: Ասիլ ամիրա երդում առնելով անկէ Վան քաղաքը յանձնեց և ինքը գնաց իր կահ կարասիներով Զուլամերիկ: Խակէնտէր՝ Վանը տուաւ իր որդւոյն Արալի և վերստին Ուշտունիք երթալով՝ բռնեց Մեկիքի հօրեղբայրը և Եզդինի եղբայրը Պուհարինը և սպաննեց զայն և աւարի տուաւ երկիրը և յափշտակեց Աղթամարի կղզին և այլ տեղեր, և վերջապէս Զնջեց հայ արքայական ընտանիքի մը սերունդին սեփական այս իշխանութիւնը: Այն անտանելի խառնաշփոթութեան մէջ որ Խակէնտէր յարոյց Հայաստանի մէջ՝ ընկճուեցան քրիստոնեաներու

(20) Եզդինի որդին Մեծոփեցի և շատ մը յիշատակարաններ (Յոցակ Զեռագրաց Վասպուրականի, էջ 320, 327, 389) կը յիշատակեն միայն Մեկիք անունով որ հաւանորէն ախտորոն է (Մեկիք-Թագաւոր) և ոչ թէ անունը: Ասոր փաստ կրնայ ծագայել 1419ին գրուած Աւետարանի մը յիշատակարանին սա բառերը որ Եզդին ալ Մեկիք կը դարձնէ. «Իշխանութեան մերոյ նահանգին՝ Մեկիքի որդւոյ Ամիր Եզդին Մեկիքին...» (Յոցակ Զեռ. Վասպ., էջ 320): Իսկ 1444ին գրուած Աւետարանի մը յիշատակարանին սա տողերը «Ի դահուեան Ղարա Ուսուֆին և յամիրապետութեան Ոստան քաղաքի Ամիր Եզդինին և որդւոյն իւր Մեկիք Մահալին» (նոյն, էջ 389), այլեւս տարակոյտ չեն թողուր որ Եզդին և իր զաւակը պճնուած էին Մեկիք (- Թա-

գաւոր) տիտղոսով. սակայն անոր անունը Մեհմէտ ըլլալը տարակուսելի է, Հաւանորէն յիշատակարան իսլամ է, վանդի Մեծօրեցի և ուրիշ յիշատակարան մը զայն Ահմէտ անունով կը յիշեն (Մեծօրեցի, էջ 84): և Յոցակ Զեռ. Վասպ., էջ 353): Այս յիշատակարանը 1425ին գրուած պատմական լրացուցիչ տեղեկութիւններ կու տայ, Ահմէտի մասին ըսելով թէ «այս բոլոր տարի մ'է, որ չար բռնաւորն Ամիրզա Սթանդարն՝ տէրն թաւրիզոյ, ազգաւ թուրք, զամիրապետն Ոստան քաղաքի զՍուլթան Ահմէտն՝ ըմբռնեալ է և երկաթէ կապանօք ի յԱլքենջոյ բերդն ի բանդի եղեալ, ինդրելով զանօք ի նմանէ զանաօիկ ամրոցս նորա: Եւ զերկիրս Հայոց, զԱղբակ և զՔարապահ և զՈստանայ երկիրս՝ մինչ ի Բաղէշ, անմարդարեակ արարեալ...»:

վերջին կայանները: 1428ին գրուած յիշատակարանի մը մէջ²¹ կը յիշատակուին Աղթամարը, Ոստանը և Ամիւլը, որոնք գրաւուեցան Սքանդարէն:

Հաւանորէն այս տեղերուն վրայ իսկէն տէր զրաւ իսլամ կառավարիչներ կամ իշխողներ: Արդարեւ, 1428ին իբրեւ Ամիւլի տէր կը յիշուի Հաճի պէկը, որ Աղթամար ապաստանած Հայերը ամբողջ գիշեր մը բռնածեծ ընելով 40,000 զահեկան կորզած և մեկնած է: Յիշատակագիր մը իրաւամբ կ'որբայ ըսելով «էս առ անիծեալն Սքանդար զաշխարհն մեր և զանաորիկ բերդորայքն քրտանաց (քրիստոնէից?), զՎան, զՈստան և զայլս աւանայն ի ձեռաց բնիկ պարոնաց մերոց և անցոյց զտունն Շամանից և քնաց երկիրս շատ աւերակ» (Դիւան Հայոց Պատմ Ժ. գիրք, էջ 10), և 1427ին յատկապէս խօսելով Մակուայ գրաւման մասին (նոյն, էջ 3-5) կը շեշտէ թէ Մակու «ի բոլոր աշխարհացս այն մին բերդն միայն քնացեալ» էր «ի ձեռն քրիստոնէից և այս եւս առաւ ի մէնջ» իսկէն տէր²²:

Ասկէ որոշ է թէ միւսները (Վան, Ոստան, ինչպէս նաեւ Ամիւլ եւայլն) թէեւ անկախ թշնամեաց՝ սակայն ջրիստոնէից ձեռքը չէին:

Կրնանք հետեւցնել ուրեմն թէ իսլամութեան յարած հայ իշխանական տուններ մինչեւ Ժ. դար իշխած են այս շրջան:

(21) Թովմաս Մինասեան 1428ին Ոստանի մէջ գրած Աւետարանի մը յիշատակարանին մէջ կ'ըսէ. «Ամիրզա Սքանդար... տիրաց աշխարհին մերում և էսո բռնութեամբ զանաորիկ ամբողջ աշխարհի մերոյ, այս է զանամառնիս և զանկոխ ոտից թշնամեաց և զանկոխ ապաստանի բոլոր աշխարհացս, զկղզիս Աղթամարայ և զանաորիկ ամբողջ և զմայրաքաղաքն երկիրս զՈստան և զպարանոցատանն զԱմուլ... զբոլոր աշխարհն բռնակալեաց ընդ ձեռամբ իւրով և ընդ իշխանութեամբ» (Դիւան Հայոց պատմ. Ժ. գիրք էջ 3):

(22) Մակուի գրաւումը կատարուած է 1426ին, ինչպէս կը հասկցուի նոյն թուականին Գարեթ գրուած Զեռագիրի մը յիշատակարանին (Երեսօրագ. Սաւա-

նեռուն մէջ: Մասնաւորապէս Եզդինի սերունդը շարունակուած էր. զի Մեկիւք Ամատի որդին և Եզդինի թոռն Ամիր Փիրի Բէկն դարձեալ իշխանութեան տիրացած կը գտնենք, ինչպէս 1431 թուականով յիշատակարանէ մը կը հասկցուի (տես. Յուրակ Զեռ. Վասպուրականի, էջ 312)²³, այս անգամ հաւանորէն իբր գործակից իսկէնտէրի, իրենց գոյութիւնը պահելու համար, անշուշտ շատ անջնջացած և հրաժարած Արծրունեաց թագաւորութիւնը վերականգնելու երազէն, զոր սակայն չլքեցին Ամիւլէն անջատուելով Աղթամարի իշխող Մէֆէդդինի յաջորդները: Խեղենիկի այս փեսան ունեցաւ Ստեփանոս, Ամիր կամ Պարոն Կուռճի բեգ, Ամիր կամ Պարոն Գուրգէն (Գորգի), Զաքարիա, Թագուհի և Մարթա անուն զաւակներ (տես. Բիւզանդիոն. Թ. 1193. Հ. Ալիքեան. Գաւազանգիրք, էջ 42), որոնցմէ առաջինը Ստեփանոս եղած է Աղթամարի կաթողիկոս (1272-1296), թերեւս վարելով նաեւ աշխարհական իշխանութիւն, վասնզի յիշատակարանի մը մէջ (1276 թիւին, տես. Մատենադ. նախնեաց քարդ. էջ 164-165) կը յիշատակուի «ի թագաւորութեան տեառն Ստեփանոսի» (Հ. Ալիք. Գաւազ. էջ 43): Ստեփանոսի կը յաջորդէ իր եղբայրը Զաքարիա Ա. Մէֆէդդինեան (1296-1336), որուն Սամուէլ Անեցիի շարունակողը (էջ 159) կու տայ «պայազատն և արքայազարմն» կոչումները (Գաւազան-

Լանի ցուցակ Թ. 1332), Հոն գրուած է «ի նոյն ամի որում էսո Բագմատար անուն ոմն բռնաւոր, որդի Ղարա Ուսուֆին անաորիկ բերդն Մակուայ» որուն հայ բնակիչները Ունիթուներու հետեւող էին:

(23) Ահա այս յիշատակարանը որ շատ յստակ է. «յամի Պ և ութսուներորդի (= 1431) թուականութեան հայկազան տուամբիս, անհարին ազատ և մեծ կակիճ դիպեցաւ աշխարհին մերում, վասնզի Ամիր Փիրի Բէկն, ազգաւ քուրդ, թոռն Ամիր Եզդինի, էսո աստուածապահ և զանաորիկ կղզին Աղթամար, որ տեղի էր ապաստանի ամենայն աշխարհացս...» (Յուրակ Զեռ. Վասպուրականի, էջ 312):

էջ 47): 1336ին գրուած ձեռագրի մը մէջ կը յիշատակուի «ի կաթողիկոսութեան հայկազանց սեռի, տեառն Զաքարիայ Աղթամարեցոյն և ի թագաւորութեան նստեալ ի գահն... զոր տէր Աստուած պահեացէ անասանելի զաթոռ Հայրապետական և զթագաւորական» (Յուրակ Զեռ. Վաս. էջ 195):

1338ին գրուած ձեռագրի մը յիշատակարանը կը յիշէ Զաքարիա Ա. ի յաջորդը՝ Ստեփանոս Գ. կաթողիկոսը (1336-1346) նախորդ յիշատակարանին բառերովը, բաւական նմանութեամբ և միայն անունի փոփոխութեամբ (տես. նոյն, էջ 197)²⁴: Ասիկա այնքան տարօրինակ պէտք չէ թուի, վասնզի Հոռմկլայի մէջ նստող մեր կաթողիկոսներն ալ քաղաքական և կրօնական իշխանութիւնները իրենց անձին վրայ միացուցած էին:

Աղթամարի Մէֆէդդինեան կաթողիկոսները աւելի մեծ իրաւամբ կը գործածէին այս զոյգ իշխանութիւնները, քանի որ կը յաւակնէին ըլլալ Գագիկի տոհմին և Արծրունեաց թագաւորութեան յաջորդութիւնը եղող Ամիւլի իշխանութեան ժառանգորդները:

Դժբախտաբար հակառակ իր կղզիի դիրքին՝ Աղթամար ալ զերծ չէ մնացած բարբարոսներու յարձակումէն, վասնզի ինչպէս թոմա Մինասեան կը հաւաստէ 1431ին «էսո փերէկն»²⁵ զԱղթամար կղզին և անպատմելի տրամութիւն եհաս աշխարհիս և ազգիս Հայոց և երկիրս աւերակ քնաց երկու տարի»:

(24) Կան այս տեսակ ուրիշ յիշատակութիւններ ալ՝ Այսպէս «ազգաւ Արծրունի» ներկայացուած է Ստեփանոս Գ. (1336-1346), «յարմատոյ և ի ցեղէն մեծ թագաւորին Գագիայ» կոչուած է Զաքարիա Գ. (1434-1464), Նոյնիսկ 1478ին և 1480ին զոյգ կը յիշուին հայրապետական և թագաւորական աթոռները (Յուրակ Զեռ. Վասպուրականի, էջ 484 և 504):

(25) Եզդինի թոռն և Մեկիւք Ամէտի որդին ինչպէս բացատրուեցաւ (տես. ծանօթ. 23):

Իսկէնտէրի մահէն (1435) վերջ, երբ Հայաստան բոլորովին անիշխանութեան մատնուած վիճակ մը ունէր, անակնկալ կերպով կը ստեղծուէր կացութիւն մը որ խաղաղութեան յոյսեր կը ներշնչէր:

Ճիհան կամ Զահան՝ իսկէնտէրի եղբայրը, որ անոր յաջորդած էր (1437-1467), 1446ին Շահրուսի հպատակութիւն կը յայտնէր (Մեծ. 103) և Շահրուսի զինքն կը նշանակէր իսկէնտէրի տեղ Շահնի Արմէն կամ Ատրպատականի ամիրա:

Ճիհանշահ օրէ օր աւելի զօրացաւ և ընդարձակեց իր տիրակալութիւնը:

Ասիկա Դավրէժ նստելով կը տիրէր Պարսկահայոց, Կորճէից, Սիւնեաց, Արզուինի, Արարատի և Վասպուրականի, ունենալով ամէն տեղ իր հովանաւորութեան տակ ամիրաներ և բէկեր — մեծ մասամբ քուրդ, որոնց պետն էր իր որդին Հասան Ալի, որ կը նստէր Նախիջեւան իբր ընդհանուր կուսակալ Հայաստանի, իր ձեռքին տակ ունենալով փոխ-կուսակալներ, Վանի, Երեւանի, Տփղիսի եւայլն վայրերու մէջ բէգ կամ պէկ կոչումով:

Ասոնցմէ մէկն էր Երզնկայ պէյը, Հայոց բարեկամ, որուն հովանիին տակ կատարուեցաւ 1441ի Մայր-Աթոռի տեղափոխութիւնը դէպի իր նախկին վայրը Էջմիածին:

Ճիհան շահ իր տիրապետութիւնը դէպի Արեւելք տարածելէ և բովանդակ Պարսկաստանը իր իշխանութեան ենթարկելէ (1460) և այսպէս մեծ և ահարկու ասիական կայսրութիւն մը կազմելէն անմիջապէս վերջը, նոյնիսկ իրեն հարկատու դարձնել յաջողեցաւ Հայաստանի հարաւային մասին տիրակալող Ազգոյունլուներու Սուլթանը՝ Ճիհանկերը (1461):

Այս իշխանութիւնը որուն կողմէ Հայերը բարեացակամութիւն տեսնէին և յաջողեցին ազգային ընդհանուր ժողով մը գուժարելու և Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը իր նախկին վայրին մէջ վերահաստատելու, յուսադրեց Հայերը, որոնք

իրենց համար անդորր և խաղաղ կեանք մը ապահովելու ձեռնարկ մը կատարելու փորձութիւնը ունենան, իրենց եկեղեցական քայքայուած վարչութեան վերանորոգութենէ վերջ փորձելով ստեղծելու նաև քաղաքական անկախութեան կորիզ մը:

Արդարեւ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան աթոռին Էջմիածինի մէջ վե-

(26) Պէտք է զիտել տալ թէ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան վերստին Էջմիածին փոխադրելու ծրագիրը մշակողները՝ որպէսզի անկա կրթէր քաղաքական իշխանութեան մը վրայ, այդ իշխանութեան վերահաստատութեան վրայ ալ խորհած են: Դամանակը նպաստաւոր էր: Հայաստանը իրենց միջև կիսող երկու իշխանութիւնները, Գարագոյնեւոնները և Ազգայնաւորները երկրին բնիկ տարրին՝ Հայերուն վրայ կը վերաբերէին և զայն սիրաշահել կ'ուզէին: Ասոր համար էր որ ձիհանաճ՝ հովանաւորեց 1441ի Էջմիածնի ժողովը և ձիհանակը՝ աչք զոցեց երբ Աղթամարի կաթողիկոսներ Էջմիածինը զրաւեցին և Հայ թագաւոր մը օժեցին: Նոյնիսկ որոշ է թէ տիրողներու մրցումը և պայքարը առանց նկատի առնելու Հայերը ուզած են Աղթամարի կաթողիկոսներու կրկնակ հեղինակութենէն օգտուել: Ըստ Թովմա Մեծորեցիի Թորգոմեան ազգին փրկութեան ժամանակը հասած էր, Մեծն Ներսէսի տեսիլքին համեմատ, վասնզի Հայոց ազգը բոլոր հոգեւոր շնորհներէ և մարմնաւոր փարթաւութիւններէն զրկուած էր և բարեպաշտական փորձիկ մէկ նշոյլը մնացած էր «յոտն Վարդապ, ի կողմն Հարաւոյ», ուրկէ ոմանք ելած կ'երթան «ի կողմն հիւսիսոյ»: Ասիկա արդեօք ահնարիկ մը չէ՞ Աղթամարի աթոռին կրօնական և քաղաքական իշխանութեան: Այն ատեն հոն կը գահակալէր «ի թագաւորական զարմէ տէր Զաքարիա, որ էր ի յազգէն Գաղկայ թագաւորին»: Զաքարիա (1434-1464), ճարպիկ և զործունեայ անձ, Ազգայնաւոր Զիհանկերի բարեկամն էր և իրեն հետ դժուար էր մարառիլ, ուստի հաւանօրէն իրեն խոստացան Էջմիածինի աթոռը, բայց վերջը չգործադրեցին: Զաքարիա, իր խաբուելուն վրէժը լուծեց ընտրութեամբ չտրուածը բռնութեամբ զրաւելով՝ պետական ոյժով Էջմիածնի աթոռը յափշտակելով երեք տարի (1461-1464), իր յաջորդը Ստեփանոս (1465-1489) որ չզարգեցաւ Զաքարիայի ծրագիրը իրագործել աշխատելէ և քաղաքական իշխանութիւն մը ստեղծելու համար հաւանօրէն օժեց Սմբատը թագաւոր, թերեւ Զաքարիայի ծրագրին համաձայն: 1467ին Ստեփանոս ալ բռնի տիրակալեց Էջմիածինի և թերեւս պիտի յաջողէր իր ծրագրին մէջ՝ եթէ Զիհանաճի (1444-1467) մահը վրայ չհասնէր և ինքն չզրկուէր իր մեծ պաշտպանէն:

Բահաստատուելէն 24 տարի վերջ, Աղթամարի Ստեփանոս կաթողիկոսը (1465-1485) զարմանալի փորձ մը կ'ընէ իր ազգականներէն Սմբատը (որդին Սմբտ Գուռլի բէկ Սէֆէնդլինեանի) օժելով Աղթամարի մէջ «Հայոց քաղաւոր» 1465ին, տարօրինակ համարձակութեամբ մը, անշուշտ տիրողներու մէկ թոյլտուութենէն կամ պատահականութենէ մը օգտուելով:

Սմբատը որ միայն երկու տարի այս տիրադատով յիշատակուած կը գտնենք, քանի մը յիշատակարաններու մէջ, ապահովաբար Աղթամարի կղզեակէն դուրս ոչ մէկ իշխանութիւն ունեցած է:

Այս ձեռնարկին մէջ, որ գուցէ մրցակցութեան մը²⁶ հետեւանքն է, Աղթամարի կաթողիկոսին և Զիհանկերի անձնական բարեկամութիւնը դեր մը կատարած է, թէեւ այս մասին որոշ փաստ մը չունինք:

Զիհանկերի յաջորդին՝ եղբորը Ուզուն Հասանի (1467-1478) իշխանութեան տակ կը փոխուին բոլորովին տրամադրութիւնները և միահեծանութեան շրջան մը կը բացուի, ուր անկարելի էր որ տոկային այս տեսակ պզտիկ իշխանութիւններ:

Եւ պատահեցաւ անխուսափելին և Սմբոնեանց թագաւորութեան շարունակութիւնը կամ ժառանգները ըլլալու յաւակնող այս իշխան — կաթողիկոսներու աշխարհիկ իշխանութիւնը այլ եւս չյիշուեցաւ, թէեւ դիտելի է որ Սմբատ «թագաւոր» ի որդին Զաքարիա Դ. (1489-1496) իբր կաթողիկոս գահակալելով Աղթամարի աթոռին վրայ բաժնուած հոգեւոր և մարմնաւոր իշխանութիւնները վերստին կը միանային, և ասոր համար էր անշուշտ որ տակաւին 1478 և 1480 թուականներով յիշատակարաններու մէջ (տես. Յուզակ Չեռագրաց Վասպուրականի, էջ 484 և 514) կը հանդիպինք սա տեսակ բացատրութեան մը, «պահեսցէ անսասուն զաթոռ հայրապետական և թագաւորական մերոյ ազգին»:

ԱՐՇԱԿ ԱՂՊՅԱՆ

ԲԵԹԸՖԻ ԶԱՆՏՈՐ

(1823 ՅՈՒՆՈՒԱՐ 1 — 1849 ՅՈՒՆՆԻՍ 31)

(Շար. Բագմ., 1950, թիւ 4-5, էջ 76)

ԲԵԹԸՖԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ:

Բեթըֆին անակնկալ երեւոյթ մ'է հունգարական մատենագրութեան մէջ: Ասուպի մը նման եղաւ զալուստը, որովհետեւ ոչ մէկ հեղինակ գուշակել կու տար իր երեւումը, բայց անջնջելի հետքեր թողուց իր ետեւէն:

Հունգարական պատմութեան զարթոնքին ամենաբարդ շրջանին ապրեցաւ, երբ մեծ մարդոց հոյլի մը առաջնորդութեամբ ազգը ինքնագիտակցութեան կը հասնէր և անկախութեանը համար պայքարել կը սկսէր: Այդ պայքարին ամէնէն ցայտուն դէմքերէն է Բեթըֆին և անտարակոյս ամէնէն հաւատարիմ պատկերացնողը իր քերթուածներով:

Այսօր դարու մը հեռաւորութենէն դիտելով, կը նկատենք իր մէջ այն բացառիկ անձնաւորութիւններէն մին, որոնք ազգերու պատմութեան մէջ կ'երեւին և սահմանուած են այդ ազգին պատմութիւնը յեղաշրջելու և նոր ճամբաներէն քալեցնելու: Ու ինք զգաց իր այդ առաքելութիւնը: Ինքզինք նկատեց միշտ նախասահմանութեան մարդը և այդպէս տպաւորուած արտադրեց: Ոչ ոք իրմէ աւելի ձիրքերով օժտուած էր այդ առաքելութիւնը գլուխ հանելու համար:

Միլիոններու զգացումները կը կրէր իր սրտին մէջ և միլիոններու ախորժած լեզուով արտայայտեց անոնց ուրախութիւնները, տառապանքները, փափագները և ձգտումները: Անթիւ մարդիկ իր մէջ գտան իրենց զգացումներու թրթռացումները,

մարդկային յաւերժական փափագներուն և դէպի լոյս ձգտումին հաւատարիմ թարգմանը, ու մանուկը թէ ձերունին՝ սիրեցին անոր քնարերգական թեւերուն վրայ դէպի եթերը բարձրանալ արեւին մէջ լոգանք առնելու և կամ իջնելու իրենց տառապանքներու ծովին խորը, միշտ գտնելով Բեթըֆինի մէջ այդ հակոտնեայ զգացումներուն հարազատ թարգմանը: Ասկէ իր քերթուածները գերեցին միտքերը, նոր աշխարհ, նոր կեանք փթեցուցին նոյնիսկ անտարբերներու սրտերուն մէջ, ու նոյնիսկ առօրեայ մարդը, սովորութեան ստրուկը հարուածուած իրեն թմրած եսասիրութեան մէջ, ելաւ իր սահմանափակ շրջանակէն և լծուեցաւ ազգային բարօրութիւնը ապահովելու սրբազան գործին, ուսած իր քերթուածներէն՝ թէ ազգին բարօրութիւնը անհատներու բարօրութիւնը կը նշանակէ:

Ահա այս մարդը կազմող բացառիկ ձիրքերը:

Բեթըֆինի մէջ նախ և առաջ դուրս կը ցայտի անոր ուժեղ անհատականութիւնը: Այդ անհատականութիւնը կերտելու համար միացան վարվուուն և բացառիկ միտք մը, անսահման երեւակայութիւն մը, յաւատեւ թրթռացող սիրտ մը և խորթաբանաց աչքեր, որոնցմով ամէն բան կը տեսնէ, ամէն բանի կը հետեւի և կը վե-